ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 17

«30» 03 2022 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 91 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով՝ Գորիսի կայազորի զինվորական դատախազության դատախազի 1 թափուր հաստիքը կրճատելու և Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի հունիսի 10-ի N 54 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 91 հրամանի 1-ին հավելվածի 5-րդ բաժնում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 39-րդ գլխի 144-կետի «Դատախազության դատախազ 8» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 9» բառերով, իսկ «**Ընդամենը 13**» բառերը՝ «**Ընդամենը 14**» բառերով,

2) 44-րդ գլխի 164-կետի «Դատախազության դատախազ 4» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 3» բառերով, իսկ «**Ընդամենը 7**» բառերը՝ «**Ընդամենը 6**» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի

Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ